ՎԵՐՈՆԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆԿԱՏՈՒՄՆԵՐ ՄԱՐՏԻՐՈՍ ՂՐԻՄԵՑՈՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(Ծննդյան թվականի խնդիրը)

Մարտիրոս Ղրիմեցին 17-րդ դ. առավել աչքի ընկած դեմքերից է, ազգային-եկեղեցական եռանդուն գործիչ ու գրչի մարդ, որ արդարացիորեն իր վրա է հրավիրել Հայ Եկեղեցու պատմության մասնագետների ու բանասերների ուշադրությունը՝ սկսած Մ. Օրմանյանից, Մ. Պոտուրյանից ու Մ. Աղավնունուց մինչև ավելի նորերը՝ Հ. Քյուրտյան, Հ. Ոսկյան, Ա. Մարտիրոսյան և ուրիշներ: Մարտիրոս Կաֆացուն կամ Քեֆեցուն (հավանաբար հանդուգն պահվածքի և ղրիմեցի լինելու համար ժամանակակիցներից կոչված նաև «Թաթար Մարտիրոս») նախ և առաջ գնահատել են իր ժամանակակիցները՝ անվերապահ համակրանք, նույնիսկ հիացմունք արտահայտելով նրա նկատմամբ: Այդ մասին են վկայում Խաչատուր Խասպեկ երեցի չափածո տարեգրությունը, Երեմիա Չելեպի Քյոմուրճյանի «Օրագրութիւնը», որոշ ձեռագրական հիշատակարաններ և այլն: Ղրիմեցու չափածո ժառանգությունն արժանացել է, մանավանդ, Մ. Պոտուրյանի, Ա. Մարտիրոսյանի և Հ. Ոսկյանի ուշադրությանը: Արտաշես Մարտիրոսյանը «Մարտիրոս Ղրիմեցի» գրքով (1958 թ.), ավելի ամբողջական, քան Մկրտիչ Պոտուրյանը, հրապարակ հանեց տաղասացի բանաստեղծական վաստակի արժեքավոր մասը՝ նրա կյանքին ու ստեղծագործությանը նվիրված հանգամանալից ուսումնասիրությամբ: Այդ գիրքն ի մի է բերում Ղրիմեցու մասին պահպանված հայտնի ու անհայտ մատենագրական բազմաքանակ փաստեր, քննաբար արժևորում նախորդների կատարած ուսումնասիրությունը և գիտական ավելի կատարյալ տեսքով ներկայացնում եկեղեցական գործչի ու բանաստեղծի դիմանկարը:

Որքան էլ հարուստ են Ղրիմեցու գործունեությանը վերաբերող տեղեկությունները, այնուամենայնիվ նրա կենսագրության հետ կապված որոշ կետեր դեռևս մնում են չպարզված: Ինչ խոսք, այդ կարգի յուրաքանչյուր նորահայտ վկայությունն իր օժանդակությունը կբերի Ղրիմեցու կենսագրության բացերը լրացնելուն: Այժմ մեր տրամադրության տակ են երկու սկզբնաղբյուրներ՝ Ղրիմեցուն ժամանակակից մի աշխատություն և ձեռագրական մի հիշատակարան, որոնք լրացնում և ճշտում են մտցնում Ղրիմեցու կյանքի և գործունեության մասին մինչև այժմ ունեցած մեր պատկերացումներում:

Դրանցից առաջինը «Բոնի միութիւն Հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հռովմայ. ժամանակակից յիշատակարանք» գիրքն է՝ հրատարակված Ս.-Պետերբուրգում

1884 թ. Կ. Եզյանի աշխատասիրությամբ: Այդտեղ լեհերենից Ստ. Մալխասյանցի գրաբար թարգմանությամբ տեղ է գտել Թեատինյան միաբանության անդամ, 1663-1677 թթ. լեհահայոց գաղութում, մասնավորապես Լվովում գործունեություն ծավալած Ալոյիսիուս Մարիուս Պիդուի[1] աշխատությունը՝ բաղկացած երկու բաժնից, որոնցում պատմվում է Լվովի պապական հայոց դպրանոցի հիմնադրման և հետագա գործունեության մասին ընդհուպ մինչև 1669 թ. ապրիլը (էջ 1-135): Դրանց կից ներկայացված է և օտարազգի կաթոլիկ անհայտ մի հեղինակի ընդարձակ շարադրանքը, թե ինչպես են Լեհաստանի հայերը մինչև 1676 թ. դավանափոխ եղել (իհարկե՝ բռնությամբ) և միացել են կաթոլիկ Եկեղեցուն (էջ 137-270): Մեր հոդվածի համար կարևորություն է ներկայացնում Պիդուի աշխատությունը:

Պիդուն Կղեմես Գալանոսի (1610-1666) քարոզիչ-համագործակիցն էր: Երկուսով պայքարել են ի խնդիր լեհահայ ծաղկուն համայնքն ու եկեղեցիները կաթոլիկ դավանանքին ու ծեսին ենթարկելու՝ նեցուկ ունենալով Վատիկանն ու լեհական իշխանությունները, գործելով խարդախությամբ ու սուտ խոստումներով և կանգ չառնելով ոչ մի միջոցի առաջ: Սկսել են գործել 1663 թվականից՝ համակիրներ ունենալով Լվովի եպիսկոպոս տխրահռչակ Նիկոլ Թորոսովիչին և հայ ծախու այլ հոգևորականների: Կղեմես Գալանոսի մահվանից հետո, 1666 թ., Պիդուն ստանձնել է լվովյան դպրանոցի ռեկտորի պաշտոնը: Ազգությամբ ֆրանսիացի այդ գործիչն այնքան հիմնավոր է տիրապետել գրաբարին, որ 1668-1669 թթ. դպրանոցում կազմակերպել է աշակերտական թատրոն և բեմադրել իր հեղինակած հայալեզու թատերգությունները՝ «Մարտիրոսութիւն սրբոյն Հռիփսիմէի» և այլն[2]:

Վերոհիշյալ աշխատության առաջին բաժնում Պիդուն բավականին մանրամասն անդրադառնում և վավերագրում է Լեհաստանի, Թաթարստանի (Հոնաց աշխարհ, Ղրիմ) և Վալախիայի ու նրանց մերձակա տարածքների հայոց եկեղեցիների ու հոգևորականության՝ իրեն ժամանակակից վիճակը և հաճախ կարևոր տվյալներով հականե-հանվանե ներկայացնում այնտեղ գործող եկեղեցականներին ու կրոնավորներին: Այդ տվյալները, անշուշտ, վավերական են և հաշվի են առնվել թեատինյան քարոզիչների գործունեության ընթացքում: Պիդուն, հոգևորականների անունները տալիս, նշում է նաև նրանց տարիքը՝ իբրև կարևոր հանգամանք:

Նրա աշխատության մեջ բարեբախտաբար հակիրճ խոսվում է նաև Ղրիմի այն քաղաքների (Կաֆա, Բալակլավա, Բախչիսարայ, Ղարասու, Կոզլով, Պերեկոպ կամ, ըստ հայկական անվանման՝ Որիբերան, Խրիմ կամ Սուրխաթ) և չորս գավառների մասին, որոնցում հայկական եկեղեցիներ ու վանք-սրբատեղիներ են եղել, մասնավորապես տեղեկություն է տրվում Ղրիմի հայոց հոգևոր առաջնորդի մասին. «Այս ամենայն քաղաքք եւ եկեղեցիք են ընդ իշխանութեամբ միոյ եպիսկոպոսի,-

---

[1] Պիդու դը Սենտ Օլոն Լուի Մարի, ծնվ. 1637 թ. Փարիզում, վախճ. 1717 թ. Սպահանում:

[2] Դրանցից պահպանվել է միայն նշված ողբերգությունը՝ տպագրված «Բազմավեպի» 1884-1886 թթ. համարներում:

գրել է Պիդուն:- Զարդիս Մարտիրոս է անուն եպիսկոպոսին, որ ձեռնադրեալ է ի Յակոբոս կաթողիկոսէ եւ է յերիտասարդ հասակի, ամաց իբրեւ 35-ից»[3]:

Հիշատակվող Մարտիրոս եպիսկոպոսը, անտարակույս, Մարտիրոս Ղրիմեցին է, որը 1659 թ. մայիսի 25-ից մինչև 1660 թ. նոյեմբերը Պոլսի հայոց Պատրիարքն էր՝ եպիսկոպոսական պաշտոնով, թեև դեռևս եպիսկոպոս չդարձած[4], ապա 1660 թ. նոյեմբերին զրկվելով պատրիարքի պաշտոնից՝ 1661 թ. հունվարից նվիրակ էր եղել Թուրքիայի արևելյան տարածքների՝ Անատոլիայից մինչև Ամիդ, որտեղից հասնելով Սուրբ Էջմիածին և ներկայանալով Հակոբ Ջուղայեցի Կաթողիկոսին՝ ձեռնադրվել էր եպիսկոպոս և նշանակվել Ղրիմի հայոց առաջնորդ՝ այստեղ հաստատվելով ու պաշտոնավարելով մինչև 1664 թվականը: Իր աշխատության այդ մասը, հետևաբար և Մարտիրոսի մասին ծանուցումը, Պիդուն գրառել է նույն 1664 թվականին, ոչ ավելի վաղ, քանի որ1663-ին նոր էր ժամանել Լվով, և որոշ ժամանակ էր պետք Ղրիմի հոգևոր վիճակին ծանոթանալու համար, և ոչ էլ 1664-ից ուշ, որովհետև, ինչպես տեսանք, 1664 թ. Մարտիրոսը հեռացել է Ղրիմից՝ Սսո կաթողիկոսից ապօրինաբար կաթողիկոս օծված Եղիազար Այնթապցու դեմ երկարատև (1664-1680 թթ.) պայքար ծավալելով, հանգրվանելով Պոլսում ու Երուսաղեմում, գործի բերումով՝ երբեմն էլ Օսմանյան կայսրության այլ վայրերում (Բալկաններ, Ադրիանապոլիս և այլուր): Պիդուի աշխատության մեջ առկա վերոբերյալ հատվածը բանասիրության կողմից չի նկատվել և հաշվի չի առնվել Ղրիմեցու կենսագրության վերաբերմամբ:

Ուրեմն նշված ժամանակ, այն է՝ 1664 թ., Ղրիմեցին եղել է մոտ 35 տարեկան: Նորից ենք ընդգծում, որ Պիդուն տարիները նշում է ոչ թե մոտավորի սահմաններում, այլ որքան որ համոզմունք ենք կազմել նրա այդ կարգի տեղեկություններից՝ ճշգրիտ տարիներով: Այս դեպքում նրա հաղորդածը կարող ենք ընկալել այնպես, որ Մարտիրոս եպիսկոպոսը եղել է 35-ից օր ու ամսով փոքր-ինչ պակաս տարիքում: Պիդուն տեղյակ է նաև, որ Ղրիմեցուն եպիսկոպոս է ձեռնադրել և ղրիմահայոց հոգևոր առաջնորդ կարգել Հակոբ Ջուղայեցի Կաթողիկոսը (1655-1680): Հայտնի է, որ բոլոր շնորհների, առաքինի վարքի և օրինակելի գործունեության հետ միասին՝ եպիսկոպոսական օծում ստացողը նաև պետք է պահանջվող տարիքն ունենար: Եթե բացառիկ դեպքեր չկային, պահանջվում էր 50 տարեկան հասակ[5]: Իսկ Ղրիմեցին իր մտավոր զարգացմամբ, անսովոր ունակություններով, հոետորական

---

[3] «Բոնի միութիւն հայոց Լեհաստանի...», էջ 10:

[4] Ղրիմեցին Պոլսի պատրիարք դառնալու վերաբերյալ իր բարձրացումը նշել է իր ստացած մի ձեռագրի 431-րդ էջում. «Ի թուականիս մերոյ ՌԺԸ (1659) յամսեանն հոռովմայկական ի մայիսի ԻԵ, օրն չորեքշաբթի, Հոգւոյն Սրբոյ Գալստեանն պահոց, կամօքն Աստուծոյ եւ հրամանաւ Քեօփրուլու Մէհմէթ փաշա վէզիրին զգեցաք զախլաթն արքունականն՝ պատրիարք անուամբ, որ է տեսուչ եւ դէտ եւ հովիւ կոչմամբ ի վերայ տեառնական հօտիս մեր, ի քաղաքս Ըստամպօլ, նուաստ վարդապետս Մարտիրոս Ղրիմեցի՝ աշակերտ տեառն Աստուածատրոյ Սուրբ Երուսաղեմայ Հայրապետի» (տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հատ. Գ, կազմեց Վ. Հակոբյան, Ե., 1984, էջ 854-855):

[5] Հմմտ. Ա. Մարտիրոսյան, Մարտիրոս Ղրիմեցի, էջ 9-ի տողատակ:

ձիրքով ու մտասևեռ գործունեությամբ իսկապես բացառիկ անհատ էր, անվանի բաբունապետ Աստվածատուր Տարոնեցի Պատրիարքի ազգանվեր աշակերտը, որ կարողանում էր տեղաշարժ առաջացնել հայ եկեղեցական ու ազգային կյանքի հարաբերություններում: Անկախ փոքր տարիքից՝ Հակոբ Ջուղայեցին նրան շնորհել էր եպիսկոպոսական աստիճան[6]: Չէ՞ որ դրանից առաջ էլ Ղրիմեցին նշանակվել էր Պոլսի հայոց Պատրիարք, մի պաշտոն, որի համար ևս պահանջվում էր եպիսկոպոսական աստիճան, մինչդեռ Ղրիմեցին միայն վարդապետ էր[7]:

Վերադառնանք գլխավոր խնդրին: Ուրեմն 1664 թ. Մարտիրոս Ղրիմեցին մոտ 35 տարեկան էր, հետևապես նրա ծնունդն ընկնում է 1629-1630 թթ. մեջ: Իսկ Ղրիմեցու ծննդյան թվականի հարցը մինչև օրս լուծված չէ և բանասիրական անհամաձայնությունների ու վեճերի տեղիք է տվել: Որոնումն ու ենթադրություններն սկսվել են Մ. Պոտուրյանով, ըստ որի «Մարտիրոս Ղրիմեցի ... կը ծնի ի Կաֆա 1605-ի ատենները»՝ աշակերտելով Ստեփանոս Թոխաթցի «ուսեալ տաղասաց» քահանային 1616-1620 թվականներին՝ Սուրխաթում (Կաֆայի մոտ), Ս. Նշան կամ Ս. Խաչ վանքում, և ապա՝ Թոխաթում (Եվդոկիա), ուր գնում է 1621 թ.[8]: Ստեփանոս Թոխաթցի տաղասացն իսկապես հեռացել էր Ղրիմից (1619 թվականից հետո) և արդեն 1621 թ. վերահաստատվել իր ծննդավայր Թոխաթում: Մարտիրոսը նրան աշակերտելու համար Ղրիմից պետք է հասներ Թոխաթ:

---

[6] Մի այլ տեղեկության համաձայն, որ պահպանվել է Ղրիմեցու ստացած և Երուսաղեմի վանքին նվիրաբերած «Մեկնութիւն Եսայեայ» ձեռագրի գրիչ Վարդանի հիշատակագրության մեջ՝ 1658 թվականից, այդ տարի Մարտիրոսը Ղրիմի եպիսկոպոս-առաջնորդ է նշանակվել. «... յայսմ ամի կարողութեամբն Քրիստոսի եղեւ դէտ եւ իշխող աշխարհին Հոնաց» (տե՛ս Ն. եպս. Պողարյան, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Հակոբյանց, հատ. Բ, Երուսաղեմ, 1967, ձեռ. թիվ 430): Երևի Մարտիրոսը նախապես եպիսկոպոսական պաշտոն ստացած է եղել Ղրիմի համար, բայց մնացել է Պոլսում, նշանակվել տեղի պատրիարք, և ապա 1661 թ. Հակոբ Ջուղայեցին վավերացրել-ձեռնադրել է եպիսկոպոս Ղրիմի հոգևոր թեմում:

[7] Ի դեպ, Ղրիմեցուն իր «Օրագրութեան» մեջ Երեմիա Քյոմուրճյանն իբրև վարդապետ է հիշատակում սկսած 1655 թվականից, մինչդեռ կա տեղեկություն այն մասին, որ այդ պատվին Ղրիմեցին արժանացել է 1656 թ. Աստվածատուր Տարոնեցու ձեռքով՝ Եղիազար Այնթապցու միջամտությամբ: Այն ժամանակ դեռևս կաթողիկոսական վեճերը բորբոքված չէին, Եղիազարն ու Մարտիրոսը միասին էին գործում, պայքարում Երուսաղեմի հունական համայնքի ոտնձգությունների դեմ՝ ազատագրելու Երուսաղեմի հայկական սրբավայրերը և հաստատելու համար տեղի հայ համայնքի ժառանգական իրավունքները եթովպական վանքերի ու կալվածքների նկատմամբ: Անկողմնակալ Երեմիա Չելեպի Քյոմուրճյանն իր «Օրագրութեան» մեջ հավաստում է Եղիազարի ու Մարտիրոսի բարեկամությունն ու դաշինքը 1650-ական թվականներին, երբ գրում է. «... Մարտիրոս վարդապետն, որ ունէր առ Եղիազարն ուխտ սիրոյ առ միմեանս, թէ՝... զբանս մեր յառաջ տարցուք...» («Օրագրութիւն Երեմիա Չէլէպի Քէոմիւրճեանի», հրատ. Մ. արքեպս. Նշանյան, Երուսաղեմ, 1939, էջ 327): Երբ Եղիազարը հույների խարդավանքով կանգնած էր ձերբակալման ու դատապարտման վտանգի առաջ, Մարտիրոս Ղրիմեցու ջանքերով է, որ ազատվեց ու անպարտ համարվեց: Եղիազարի խնդրանքը Տարոնեցուն երախտագիտական հատուցում էր առ Ղրիմեցին:

[8] Մ. Պոտուրյան, Միջնադարյան տաղասաց Մարտիրոս Ղրիմեցի և իր քերթվածները, Պուքրեշ, 1924-1930, էջ 50-60:

Ըստ Ա. Մարտիրոսյանի ևս Ղրիմեցին եղել է Ստեփանոս տաղասացի աշակերտը, բայց աշակերտելով ոչ թե Ղրիմում, այլ Թոխաթում, 1620-ական թթ. կեսերից: Մարտիրոսյանի կարծիքով՝ Ղրիմեցին ծնված պետք է լինի 1620-ական թվականներին կամ նույնիսկ 1610-ական թթ. վերջերին[9]:

Երկու դեպքում էլ մենք գործ ունենք սխալ նույնացման հետ: Ոչ մի հիմք չկա Մարտիրոսի ուսուցիչ Ստեփանոսին և տաղասաց Ստեփանոս Թոխաթեցուն նույն անձը համարելու: Ղրիմեցին իր մի ինքնագիր հիշատակարանում պարզապես գրում է, որ Երուսաղեմի Պատրիարք Աստվածատուր Տարոնեցուց առաջ իր ուսուցիչը եղել է Ստեփանոս քահանան, որին ոչ իբրև տաղասաց և ոչ էլ Թոխաթցի է ներկայացնում, այսպես. «Եւ զհոգեւոր ծնօղս իմ՝ զնախնի ուսուցիչն իմ զտէր Ստեփանոս սրբազան քահանայն, որ հանգուցեալ է առ Քրիստոս...»[10], - տեղեկացրել է նա: Հաշվի առնելով, որ Ստեփանոս Թոխաթցին մի ժամանակ ուսուցիչ է եղել Ղրիմում, գրել է երգիծական տաղ («Ոտանաւորս եւ գանգատս լուանանուն եւ ճանճերուն՝ ի Թոխաթցի Ստեփաննոս իրիցուէ ասացեալ»), Պոտուրյանը եզրակացրել է, որ Մարտիրոս Ղրիմեցու ուսուցիչը, ուրեմն, Ստեփանոս տաղասաց Թոխաթցին է եղել, որն իր սանին մղել է հետագայում գրելու երգիծական ոտանավորներ, այսինքն՝ նախապատրաստել է նրա երգիծական տաղանդը: Որպեսզի Ղրիմեցուն անպայման աղերսի Թոխաթցի տաղասացի հետ, Պոտուրյանը, ինչպես տեսանք, Ղրիմեցուն Ստեփանոսի աշակերտ է ներկայացնում նախ՝ Ղրիմի Սուրխաթում, ապա՝ Թոխաթում՝ ծնունդը դնելով 1605-ի մոտերքը: Հաշվի առնենք նաև, որ Ղրիմեցին Աստվածատուր Տարոնեցուն աշակերտել է վերջինիս Երուսաղեմի պատրիարք դառնալուց, այն է՝ 1645 թվականից հետո, ուսումը շարունակելով հավանորեն մինչև 1653-1654 թվականները: Եթե համաձայնենք Պոտուրյանի այն վարկածի հետ, թե Մարտիրոս Ղրիմեցին մինչև 1619 թ. արդեն Սուրխաթում միաժամանակ աշակերտել էր Ստեփանոս Թոխաթցուն, ապա պետք է կանգնենք մի անհարմարության առաջ. այդ դեպքում պետք է ընդունենք, որ Ղրիմեցու ուսումնառությունն սկսվել է մոտավորապես գոնե 1610-ական թթ. կեսերից և տևել մինչև 1650-ական թթ. սկզբները, այսինքն՝ շուրջ 40 տարի, որ ինքնին խիստ անհամոզիչ է:

Հայ ձեռագիր գրքի բազմափորձ գիտակներից մեկը՝ հանգուցյալ ամերիկահայ արվեստաբան-բանասեր Հարություն Քյուրտյանը, Պոլսի «Շողակաթ» պարբերականում 1952 թ. սեպտեմբերյան համարում հրատարակել է մի կարևոր հիշատակարան՝ քաղված Մարտիրոս Ղրիմեցու՝ 1653-1655 թթ. Պոլսում և Երուսաղեմում

---

[9] Ա. Մարտիրոսյան, Մարտիրոս Ղրիմեցի, Ե., 1958, էջ 9-10:

[10] Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դ. հիշատակարաններ», հատ. Գ, էջ 569: Մարտիրոսի հիշատակագրությունը 1653 թվականից է: Այդ ձեռագիրը Քարոզգիրք է, Գրիգոր Տաթևացու համանուն աշխատության «Ամարան հատորը», որը գրչագրված է 1651 թ., իսկ Ղրիմեցին այն գնել է 1653 թ. Երուսաղեմում: Այդ գրչագիրն այժմ պահվում է Զմմառի վանքի մատենադարանում (ձեռ. թիվ 487): Հիշատակագրության մեջ Ղրիմեցին հիշման է արժանացնում նաև իր ծնողներին՝ Գրիգորին և Խաթունին:

օրինակած Քարոզգրքից[11]: Հիշատակարանում Ղրիմեցին խոսում է իր ուսումնառության մասին: Դրանով իսկ հերքվում է Թոխաթում նրա սովորելու վերաբերյալ ենթադրությունը: Պարզ է դառնում, որ նա կրթություն է ստացել մանկության և պատանեկության տարիներին՝ Ղրիմի Ս. Խաչում (Սուրխաթի Ս. Նշան վանքում), ապա տարիների ընդհատումից հետո՝ Երուսաղեմում, նաև՝ Կ. Պոլսում, ուր ինչ-որ մեծ խռովության ու խժդժության պատճառով իր սանի հետ Երուսաղեմից հեռացել էր Տարոնեցին: Այդտեղ էլ Ղրիմեցին ավարտել է Սուրբ Գրոց ուսումը: Մեջբերենք հիշատակարանի՝ մեզ անհրաժեշտ հատվածները.

«Որ եւ ծնեալ եւ սնեալ եմ ի սահմանս հոնական (նկատի ունի Ղրիմը - Վ. Խ.), ի կողմանս հիւսիսային, ի մեծ կղզոջն Պոնտական ծովու, ի վաղաշէն մայրաքաղաքն՝ կոչեցեալ Ղրիմ եւ Սուրխաթ (Սուրխաթը կոչվել է նաև Ղրիմ. այժմյան Ստարի Կրիմն է - Վ. Խ.): Եւ ի մանկութենէ սկսեալ ինչ եղէ ուսեալ ի Սուրբ Գրոց, բայց ոչ լիապէս, այլ միայն զճանաչումն տառից, եւ ի խորհրդոյն՝ ամենեւին անտեղի: Զոր եւ յետ բազում ժամանակի ոչ կամեցեալ զկորուստ զաստուածավայելուչ պարգեւոյս եւ անարժան ժպրհմամբ յանդգնեալ մերձեցայ ի կարգս սուրբ քահանայական եւ կրօնաւորութեան ... Եւ եկեալ ի սուրբ քաղաքս Երուսաղէմ՝ ետու զանձն իմ ի ծառայութիւն ի սուրբ տնօրինակացն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, առ ոտս երից երանեալ երջանկապատիւ քաջ ռաբունապետին Աստուածատուր՝ կոչեցեալ ճգնազգեաց վարդապետին եւ անյաղթ փիլիսոփային՝ յընթերցումն Աստուածաշունչ Կտակարանաց Հնից եւ Նորոց: Եւ մինչդեռ ոչ էր կիսեալ ի ձեռս իմ կարգ սուրբ մատենիցս, յազդմանէ չարին մեծ իմն խռովութիւն աղմկեալ ի մէջ գազանաբարոյ բռնաւորաց տեղւոյս, եւ ելեալ փախստեայ դիմեալ գնացաք ի յարքայանիստ քաղաքն Կոստանդնուպոլիս եւ անդ ի շրջագայութեան գոլով՝ ընթերցեալ յաւարտումն արարաք վերոյ ասացեալ սկսեալ տառիցն ... աղօթիւք ի վերոյ գրեալ սուրբ հօր մերոյ եւ լուսատու հրահանգի»[12]:

Հիշատակարանի հատվածական մեջբերումը հիմք է տալիս որոշ եզրակացություններ անելու Ղրիմեցու կյանքի ընթացքի և ուսումնառության մասին՝ սկսած նրա ծնունդից մինչև 1655 թվականը: Ինչպես տեսանք, ըստ Պիդուի հիշատակության՝ Մարտիրոսի ծնունդն ընկնում է 1629-1630 թթ. մեջ: Իսկ ձեռագրական հիշատակարանից իմանում ենք, որ նա ծնվել ու սնվել է («ծնեալ եւ սնեալ») հոնական սահմաններում, «ի մեծ կղզոջն Պոնտական ծովու» (իմա՝ Ղրիմի թերակղզում): Ծննդավայրը եղել է Կաֆան, իսկ կրթության վայրը՝ Սուրխաթ քաղաքը (Կաֆայի՝ այժմյան Թեոդոսիայի մոտ): «Սնեալ» բառը պետք է ընկալել ոչ միայն նյութական (սնվելու), այլև հոգևոր (ուսանելու) իմաստով: Ուրեմն կրթություն է ստացել Սուր-

---

[11] Ձեռագիրը Քյուրտյանի սեփական հավաքածուից է՝ ձեռք բերված Փարիզում 1925 թ.: Այժմ, բնականաբար, գտնվում է Ս. Ղազարի ձեռագրատանը՝ միաբանությանը նվիրաբերված Քյուրտյանի հավաքածուում: Ձեռագրի հիշատակարանը Ղրիմեցիով զբաղվող բանասերներին մինչև այժմ անհայտ է մնացել:

[12] Տես Հ. Քյուրտյան, Մարտիրոս Ղրիմեցիի նորագյուտ մեկ ձեռագիրը, «Ծողակաթ», 1952, էջ 246:

խաթում՝ «ուսեալ ի Սուրբ Գրոց»: Բայց քանի՞ տարի. դա պարզ չէ: Կարևորն այն է, որ Թոխաթ գնալու և ուսումն այնտեղ շարունակելու մասին ենթադրությունը հերքվում է: Սուրխաթում նրա ուսուցիչը, ըստ զմմաղյան ձեռագիր Քարոզգրքում Ղրիմեցու թողած հիշատակագրության, իմացանք, որ եղել է «տէր Ստեփանոս սրբազան քահանայն», որ վախճանված էր, երբ Ղրիմեցին գալիս է Երուսաղեմ: Ստեփանոս քահանան, որին երբեք չենք կարող նույնացնել Ստեփանոս Թոխաթցի տաղասացի հետ[13], իր սանին ուսուցել է հավանորեն 1630-ական թթ. վերջերին և հաջորդ տասնամյակի սկզբի տարիներին: Այդ է թելադրում առկա փաստերի տրամաբանությունը:

Մարտիրոսն Ստեփանոսի ձեռքի տակ յուրացրել էր որոշ գիտելիքներ՝ «ի Սուրբ Գրոց», սակայն, ինչպես ինքն է ծանուցում, «ոչ լիապէս, այլ միայն զճանաչումն տառից, եւ ի խորհրդոյն՝ ամենեւին անտեղի» (ինքնանվաստացման խոստովանություն, որ բխում էր միջնադարյան քրիստոնյա գործչի համեստ կեցվածքից): Այնուհետև Մարտիրոսի ուսումնառությունն ընդհատվել է (գուցե ուսուցիչ Ստեփանոսի մահով) բավական երկար ժամանակով («բազում ժամանակաւ»), հաշվենք՝ մի քանի տարով, ենթադրելի է՝ մինչև 1640-ական թթ. վերջերը: Այնժամ նա ցավով գիտակցել է, որ ափսոս է թերակիրթ մնալ և մոռացության տալ իր գիտելիքները՝ «աստվածավայելուչ պարգևները». գնացել է Երուսաղեմ (հավանաբար 20 տարին լրացած), աշակերտել Պատրիարք Աստվածատուր Տարոնեցի րաբունապետին և անհաղթ փիլիսոփային, հիմնովին խորացել-յուրացրել Ս.Գրոց գիտությունը, որոշ ժամանակ՝ Երուսաղեմում, իսկ հետո՝ Կ. Պոլսում: Այդ գիտությունը, անշուշտ, Ս. Գրքի աստվածաբանական մեկնությունն էր, սուրբգրային գաղտնիքներին, խորհրդավոր-այլաբանական գաղափարներին տեսականորեն հասու դառնալը:

Ցավոք, ինչպես Քյուրտյանի հրատարակած հիշատակարանը, այնպես էլ մատենագրական մյուս տվյալները հնարավորություն չեն տալիս պարզելու, թե Մարտիրոսը ո՞ր թվականից սկսած և քանի՞ տարի է աշակերտել Տարոնեցուն: Զմոռանանք, որ վերջինս Երուսաղեմում պատրիարք էր սկսած 1645 թվականից, որոշ ընդհատումներով շարունակելով մնալ իր պաշտոնում մինչև մահը՝ 1671 թվականը: Հաջորդել էր իր ուսուցիչ Գրիգոր Պարոնտեր Պատրիարքին: Իբրև գիտելիքնե-

---

[13] Ի դեպ, չենք կարող նույնացնել Ստեփանոս տաղասաց Թոխաթցու հետ, որովհետև նա Ղրիմից վաղուց վերադարձել էր Թոխաթ: Հազիվ թե 1640 թ. կենդանի լիներ: Հայտնի է տաղասացի ծննդյան թվականը՝ 1558: 1640-ին նա կլիներ 82 տարեկան, բնականաբար Թոխաթից Ղրիմ տեղափոխվել և ուսուցչություն անել չէր կարող: Ըստ մի տեղեկության՝ Ստեփանոս Թոխաթցի անունով մեկը այլ հրավիրվածների հետ Երուսաղեմում 1638 թ. մասնակցել է խորհրդաժողովի (տե՛ս «Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը [16-17 դդ.]», հատ. Ա, աշխատասիրությամբ Հ. Սահակյանի, Ե., 1986, էջ 709): Բայց այդ Ստեփանոս երեցին և տաղասացին հազիվ թե կարելի է նույնացնել, մանավանդ որ այդ շրջանում եղել են և ուրիշ Ստեփանոս Թոխաթցիներ. օրինակ՝ այդ անունով մեկին իր գրչագրած Աստվածաշնչի հիշատակարանում 1622 թ. տակ հիշատակում է Գրիգոր Դարանաղցին (Կամախեցին)՝ իբրև Կոմրուկի Ս. Նիկողոս եկեղեցու քահանայի (տե՛ս «Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ», հրատ. Մ. Վ. Նշանյան, Երուսաղեմ, 1915, էջ 617):

րի որոշակի պաշար ունեցող աշակերտ՝ Մարտիրոսին ուսման ընթացքն ավարտելու համար, թվում է, համեմատաբար քիչ տարիներ էին անհրաժեշտ: Ըստ հիշատակարանի՝ Երուսաղեմում նա դեռ Ս. Գրքի կեսն էլ չէր յուրացրել («ոչ էր կիսեալ ի ձեռս իմ կարգ սուրբ մատենիցս»), երբ տեղի բռնավորների մեջ մեծ խռովություն ու աղմուկ է առաջանում, և ուսուցիչ ու աշակերտ հեռանում, ապաստան են գտնում Կ. Պոլսում: Այստեղ էլ Մարտիրոսն ավարտում է Ս. Գրոց ուսումը («յոլով ընթերցեալ՝ յաւարտումն արարաք վերոյ ասացեալ սկսեալ տառիցն...»[14]:

Ուսուցիչ ու սան Պոլիս են հանգրվանել մոտավորապես 1650-ական թթ. սկզբներին, հավանորեն մինչև 1651 թվականը: Եթե Ս. Գրքի մյուս կեսը՝ մնացած ավելի մեծ մասը յուրացնելու համար ևս երկու-երկուսուկես տարի նկատի ունենանք, ուրեմն համամասնաբար Մարտիրոսը Երուսաղեմում պետք է որ սովորած լիներ 1649-1650 թվականներից սկսած և ուսումը Պոլսում ավարտել է մոտավորապես 1653 թվականին, համենայնդեպս մինչև 1654 թվականը: Տարիների քանակի հաշվով ուսումնառության ժամանակը մոտավորապես հավասար կլինի 5 տարվա, 2 տարի՝ Երուսաղեմում, 2-3 տարի՝ Պոլսում (1649-1654 թթ. սահմանում): Դրանից հետո մայրաքաղաքում «տարի մի բոլոր» զբաղվել է Քարոզգիրքը գրելով՝ 26 պրակ ծավալով: Ապա վերադարձել են Երուսաղեմ: Այստեղ Մարտիրոսը շարունակել է գրչությունը՝ ուրիշ գրիչների ևս մասնակից դարձնելով («զորն այլք գրեցին»)[15] և ամբողջն ավարտի հասցրել 1655 թ. հունիսին:

Մի անգամ ևս վերհիշենք Պիդուի վկայությունը Մարտիրոսի տարիքի մասին՝ 1664 թ. սահմանում՝ «եւ է յերիտասարդ հասակի, ամաց իբրեւ 35-ից»: Ասվածի վավերականությունը հաստատող վկայություն են Խաչատուր Խասպեկ երեց Կաֆացու չափածո տարեգրության հետևյալ տողերը, որոնք, ինչպես բանասեր Ա. Մարտիրոսյանն է նկատել, գրված են 1657 թվականին.

Սայ է Հոնաց աշխարհի
Ի դրանէ Սուրբ Նշանի,
Պարծանքն է Խրիմի
Եւ վարդապետն Կաֆացի:
Տղայ գոլով մանուկ բարի՝
Արժան լինի խորին ծերի[16]:

---

[14] Հ. Քյուրտյան, տե՛ս նշված հրապարակումը, էջ 247: Քյուրտյանը շփոթաբար այդ թվականը հասկանում է ոչ թե Մարտիրոսի ուսումն ավարտելու, այլ Քարոզգիրքը գրչագրելու-վերջացնելու առումով, այն դեպքում, երբ հիշատակարանում որոշակի նշված է Քարոզգրքի գրչության ավարտի թվականը՝ 1655 թ. հունիսի 25-ին (տե՛ս Քյուրտյանի հրապարակումը, էջ 246):

[15] Նույն տեղում

[16] Տե՛ս Ա. Մարտիրոսյան, Մարտիրոս Ղրիմեցի, էջ 8-9:

Արդեն դիտված է, որ սովորականից ավելի վաղ վարդապետական կոչման հասած երիտասարդ Ղրիմեցին, Երեմիա Չելեպի Քյոմուրճյանի «Օրագրութեան» հավաստմամբ, 1657 թ. օգոստոսի 13-ին Պոլսից այցելել է հայրենի Կաֆա՝ հաջողելու համար ինչ-որ գործ՝ կապված թաթար իշխանավորների հետ («որ առ գլխաւորս թաթարին»)[17]: Նրա հետ հանդիպման տպավորության տակ էլ իր հիացական տողերն է գրել Խասպեկ երեցը, որի ընկալմամբ Մարտիրոսը եղել է բոլորովին երիտասարդ: Խասպեկն իր հայրենակից գործչին մաղթում է երկար կյանք՝ «Արժան լինի խորին ծերի»: Ինչպես տեսնում ենք, ապառնի ժամանակի հետ կապված բարեմաղթությունը նա արտահայտել է բայի ներկա ժամանակի ձևով (ոչ թե *արժան լիցի* կամ *լինիցի*, *եղիցի*, այլ *արժան լինի*), բայց նրա ապառնի առումը (*արժանի դառնա*) տարակույսի տեղիք չի տալիս[18]: Պիդուն դրանից 7 տարի հետո է հիշատակել Մարտիրոսին: Երբ Խասպեկն իր տողերն էր գրում, Մարտիրոսը 27-28 տարեկան էր (*տղա* և *մանուկ* բառերի հարադիր գործածությունը նրա ջահելությունն է ընդգծում), իսկ Պիդուի ժամանակ՝ մոտ 35 տարեկան:

Եթե Մարտիրոս Ղրիմեցու ծննդյան թվականի և կենսագրության որոշ հանգամանքների վերաբերյալ մեր լուսաբանությունը և լրացումները ճշմարտամոտ են, ապա պետք է ընդունենք, որ Հայ Եկեղեցու և ազգային-քաղաքական կյանքի խընդիրներին անմնացորդ նվիրված այդ գործիչը, երբ 1683 թ. օգոստոսին Երուսաղեմ վերադարձին վախճանվեց Եգիպտոսում, ընդամենը 54 տարեկան էր:

---

[17] Հմմտ. «Օրագրութիւն Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեանի», հրատ. Մ. արքեպս. Նշանյան, Երուսաղեմ, 1939. էջ 263, 273 և 292:

[18] Մեզ թվում է՝ իզուր է շատ հասկանալի այդ տողի ժամանակային իմաստը վեճի առարկա դարձնում բազմարդյուն բանասեր Համազասպ վ. Ոսկյանը (տե՛ս Հ. Ոսկյան, Զորս հայ տաղասացներ և անոնց տաղերը , Վիեննա , 1966 , էջ 179-181-ի տողատակ):